աշխատութիւն յանձն առնուլ , կի՛ձախոր-
դութիւն լինի կրել , չհամբերես , այլ խռո-
վիս , քրթմնջես , և տառապիս ։ Այլ թողեր
դու զաշխարհ՝ ի չարչարիլ վ՚ն սիրոյ իմոյ .
ոչ հատուտեցեր դու ի միտս՝ տանել ամ
ծանր ծանր իրաց ի փրկութիւն հոգւոյդ քոյ ։
Արդ՝ զիարդ ի գալ առնիս կատարման բա
րի առաքադրութեցդ՝ խոժռիս և խռովիս ։
Այս հայեաց , և ասա ինձ . զինչ մեղայ ես
յաշխարհի , զո՞ երբեք զզուեցի յամ կեանս
իմ . սակայն և այնպէս՝ ի ծննդենէ հետէ
միշտ չարչարեցայ . և ի քո սակս բազում
դառն պատառ ջամբեցայն ինձ ։ Վանող
թշնամանեցայն ես . որոց միշտ համբերու
թիւ տարայ , ի տալ քեզ օրինակ , զի կեց-
ցես ըստ կոչման քում ։ Արդ՝ քոյդ այժմ
չընդդրկել զհամբերուն՝ յոժարամիտ յանձ
նառութիւն նախատանաց քեզ հասուցելոց ,
Տակաւին խակ է դժպատեհ . Թող Թէ կրօ-
նաւորի , որոյ զառաքինութի՛ն յանձն առեալ
է ,

է, և զնմանօրէն լինել ինձ, որ քաղցեմ ըղձ
մամբ միշտ դիմել առկի համբերուեն ։

Տէր, տանելի ես ամի մտադիւր վա սիրոյ
քոյ. բայց տեսնել թէ հալածեն զիս տա
րապարտուց, ոչ կարեմ հանդուրժել. վա
յժմիկ դանդատեմ, և խոսիմ։ Լսաբխա
րդեակ, թէ այդոսիկ կարծես իրաւամբք
խոսվիլ։ Այո՛ ինձ. ոչ և ես հալածեցայ
տարապարտուց. ոչ տարայ ես զրպարտ չար
բախտութեց, և տուտ վկայութեց. միթէ
խոսվեցայ ես վա այդորիկ, կիմ գանգատե
ցի երբեք։ Այս քանի՞ կրօնաւորք պատհե
ցան յերկինս, վա զի հալածեցան յերկրի։
Թէ չէին զրպարտութիք անօրինաց և անի
րաւոց, ոչ այդչափ առաւելուին արդիւնք
արդարոց։ Զարչարիչն տարապարտուց՝ ե
պատկ համբերուե։ Այս և այս թէ կրնիր դու
տոյժս և վիշտս իրաւամբք՝ վա ապիրատու
թեց քոց, այդ լիներ արժանահաս պատու
հաս, և ոչ թէ առաքինութեն համբերու
թե։ Օ՛ն համբերութինն տանի վշտաց վա
սիրոյ խնդ, և վա սիրոյ առաքինուե. վոկ
իմ գիրք երանեն այնց, որք հալածինն վա
արդարութէ։ Օ՛ քրպարտութիք համբերու
թէ տանողին՝ են յօգուտ. խոկ զրպարտչին՝
ի մեղս և ի՛ վնաս։

Այսն և կրօնաւորք, որք խոշտանկեն զան
ձինս պէսպէս ձգամբք. ումանք պահօք,
ումանք խարազնագեցուէ, և ումանք կոշ
կոճմամբ. որոց տանին յօժարամիտ համ
բերութէ. բայց յորժամ նոյն ձգանք հրա

մայրն նոցա ի մեծաւորաց , զառնանան և խառվին . և թէ առնեն և առնեն որպէս բռնի , ահաւասիկ , և անհամբերութիւք վիշտ տուժին , և կորուսանեն զարդիւնս : Ոչ այս ոչ իցէ յայտնի մոլորուն : Ասէ ինձ առ ինչ այդչափ համբերութիւք ձաղկես զքեզ , և վշտացնես : Ո՛վ ի ինձ հաճոյ լինիցիս : Այո այդպէս է , առաւել ևս յօժարութիւք և համբերութիւք պարտէր առնել քեզ զձգտունս զառ ի մեծաւորէդ հրամայեալս . զի առաւել ևս հաճոյ լինիէիր ինձ . իբր զի միաբանին յայսմ երեք առաքինութիւնք ինձ յոյժ ըղձալիք . համբերութիւն , խոնարհութիւն , և հնազանդութիւն : Այր ինքնակամ վշտացնի՝ ուր ուրեմն լինի կատարեալ :

Ա՛հ , քանի՛ ամաչեցուցանեն զդիւք զձեզ այսորիկ զկրօնաւորս՝ որ են դիւք լուսոյ : Ամենք ի նոցանէ զրգեալք ի փառամոլութիւն՝ կամ յագահութիւն՝ կամ յայլ չար յօժարութիւն , երկայնմտութիւք համբերեն աշխատութեանց , տանին ոչ հաճոյից . և ոչինչ փոյթ է նոցա կրել զվիշտս զնամ , միայն թէ հասանիցեն իւրեանց գիտմանն . իսկ ի կրօնաւորաց ոմանք չառնուն յանձն համբերութիւք տանել զժուարառեց ինչ վշտիդ , և ի փառս հոգւոց իւրեանց : Այո ոչն սիրէ , խորշի ի կրելոյ : Այս և փառամոլք և ագահք յօրժամ դիպի նոցա ընդդիմութիւն ինչ , քաջ զգուշանան չընկղմիլ ի տրտմութիւն . գիտելով թէ խոչ է այն հասանելոյ՝ յո դեմ եդեալ են . այլ սրտապնդին

տիւն ձեռնադրել յայլ մինչոյ՝ առ հասանելոյ իւրեանց վախճանին. և կրօնաւորը չամուչեն մի դոյզն ինչ աշխատուել և դառնուել տարին, և ոչ պատկառեն առ դոյզն զոյց խոժոռիլ մինչև առնել զանարժանն։ Ա՛չ այսպէս առաքեալք իմ առաքեալք. այլ ուրախ լինէին երդ ընդ երդմանս մի փառաց անուանն Քրիստոսի։ Ա՛չ մարտիրոսք այնպէս խնդուեցեք համբերեին առանձանաց, մինչև ի գնալ ոմանց ի մի վայր վառեալ կայծակամբ ի հրամանէ բռնաւորաց, քաջեր նոցա ձեմել ի մէր վարդից։

Ա՛ղհարհատանի ուրուք չհանդուրժել անի բառուցեց կիր ձախողուեց, ոչ է մեծ ինչ։ Օ՛ի քաջին նոր, եթէ որ է ի պաշտպանել զպատիւ իւր և զյարգ անձին. յորմէ չէ հրաժարեալ զոր օրինակ հրաժարեաց կրօնաւորն։ Ա՛ռակ չէն ինչ զարմանք, եթէ ի նեղայուցանել ուրուք գժգոհին։ Այլ պէս եւս մ՛ի զի չէ ձեռնտու անձնատուր այլում ի ծառայութեի, քաջի նոր բոլորովին իւր լինել, և ինքնիշխան. մ՛ակ չէ ինչ մեծ գայթագղութեի, եթէ ի կրել զաշխատութիս՝ զդայ նեղասրտութեի և տխրութի։ Այլ կրօնաւորին, որ արտաքսհմանեացն յիւրմէ զպատիւ ծայլին, և զյարգ անձին, ասպարժոյժ խոժոռիլ մ՛ի անհրաւութեցն նոր էղելոյ, անպատեհ լինի է իւրում վիճակի։ Այլ եւս մ՛ի զի կրօնաւորն անձնատուր է ինձ, ոչ եւս է իւր, այլ իմ. և բոլորովին կախեալ կայ ինէն։ մ՛ակ անմարթ է նոր տաղտկանալ, եթէ նախատեսցի, եթէ խօթասցի,

կիմ այլ ինձ օրինակաւ նեղեցցի։ Այդ ծառայի պարտ է խորհիլ, թէ ոչ ծառայես ցեղ ինձ. և զայսպէս կամ զայնպէսն լինել՝ Թողուլ իսառնոց էանց։ Վասն դիտեմ ես ծառայեցուցանել զնա, յորժամ հիւանդացեալ է, կամ յորժամ հալածեալ։ Որպէս լաւ ևս ծառայեն ինձ բազումք՝ յորժամ հիւանդ եմ և նեղեալ. քան յորժամ առողջ են, և՝ ի բարօրութիս վայելեալ։ Այլ երբեք անհաճոյ լինի ինձ կրօնաւոր մի հիւանդութեամբ մնալոյ. այլ անհաճոյ լինի մի ան համբերութեամբ՝ և մի այլոց ախտից, որք են հիւանդութիք հոգւոյ։

Այն բազում կրօնաւորք, որոց յաղօթել իւրեանց՝ Թուի Թէ կարօղ են տանել համբերութիք և արիութիք որպիսի և իցէ տանջանաց մի սիրոյ իմոյ. և զկեանս ևս տալ մի իմ, և նահատակիլ. բայց ի գործ մատուցեալ, Թէ լսեն ինչ զոյց երգիծանօզ, Թէ հրամայի նոցա ինչ, յոր պիտի փոքր մի վիշտ յանձն առնուլ, ևս ծապէս մբեռան ի սրտի. և որ էար ևս է, ոչ հանդուրժեալ՝ ցուցանեն զայն և արտաքոյ։ Որ է կիրթ համբերել փոքունց, ոչ համբերէ և ծանունց։ Արդեակ, կամիս անեղկաթ և անարիւն նահատակիլ, կամ՝ ի սրտի քում զհամբերութի։

* * *

Գ. Լ. Օ.

Յաշափս հեղուածք, զոր պարտ է ուսանել
երջանասորք։

Որդեակ, ուսիր յիմանէն, զի հեզ եմ՝ և խոնարհ սրտիւ։ Հեղուածին եղև առա ջինն առաքինութիւն, զոր ուսուցեալ յիմանէ դպրոցի. և յայս յորդորեցեալ զմիմաշակերտս. զի ե դիպող և դիւրին միջոց զայլ առաքինութիւնս առանալոյ. վ՚ս զի հեզութիւն պընդեալ զհաղաղութիւն սրտի ընդդէմ բարկութիւն, տայ հոգւոյն հեշտեաւ մնալիլ յառաքինութիւնս. իսկ զմարմինն պատապարեալ ի բուռն կրից, առնէ զնա գործի պատշաճող ի հնազանդիլ հոգւոյ առ առացումն առաքինութեց։ Ո՞ակ կրճնաւոր՝ որ չէ փութաջան ի առանալ զհեզութիւն, մարթի և ասել, թէ չէ յիմանէ դպրոցի, և թէ՝ փակէ զդուռն ընդդէմ առաքինութեց և կրճնաւորական կատարելութիւն։

Ո՞ւր ոք չէ այսպէս վայրենամիտ, որոյ զմտաւ ածեալ զդեղկութիւն, զերծանիլ, և պատկութիւնս առաքինութիւն հեզութեն, ոչ գտանիցէ զնա և ոչ յարձանակեսցի ի սէր նր։ Որդեակ, կամիս իմանալ զպարգ հեզութիւն, դիր ի կշիռ ընտրեալ ներհականի, որ է անկարգ բարկութիւն։ Զդ՝ բարկութիւն աղախին գոլով բանին, պարտի զհետ երթալ նր՝ ոպ իբրեւ օրինաւոր տիկնոջ. բայց յորժամ յառաջ

զի,

ջէ, և իբրև տիկին առաջի երեմայ բանին,
(ոչ յոլովակի պատահէ,) այնպես վեր ի
վայր շրջէ զգօրութիւնս, և այնպէս խռովէ
զբարկացօղն, որ երեւի մոլի խելագար, և
գազան դիմագիւն: Իբրև տիրէ բարկութիւն,
այնուհետեւ նախ առաջին ոչ ևս յիշէ բար-
կացօղն զիածծ, և ոչ զխիղճ մտաց իւրոց:
Օ Հոգւոյն բառնայ զդաստատանն, որ են
նր աչք. որով կուրացեալ հարկիւճ սխալէ
ի գործս իւր: Օ մարմնոյն խանգարէ ըղ-
հիւթոց խառնուածն, որով և անկանի ընդ
պէսպէս հիւանդութիք: Ընկերաց ինասէ
չար օրինակաւ: Օ հուսկն անացից. կեանք
բարկացօղին են ամենաթշուառ, ոչ միայն
զի ոչ ոք յօժարի կենակցել ընդ նմա. այլ և
վասն զի զնա կամի ըստ հաճոյից իւրոց, որ է
անհնարին: Ա՛ոկ յորժամ ոչ գործի ինչ ըստ
կամաց նր, կամ հասանի ինչ նմա ինասա՝ և զըր-
կանք, զողք բառնայ. ահագինս գոչէ.
և խնդրէ առնուլ վրէժ յայնց՝ որ զոչ հա-
ճոյս արարին. և երբեմն յիւր իսկ վէր թա-
փէ զցասումն: Ա՛յս ամ ինասուց դէմ՝ է հե
զութիւն. որոյ բնութի և գլխաւոր գործ է ըզեմ
կալ տարափայման բարկութե, և անկարգու
թեց՝ ինամանի յառաջ եկելոց: Ա՛պահնախ ա
ռաջին մեղմէ և նահանջէ զյարձակումն և
զթափ բարկութե. կամոնէ ըստ ուղիղ բանի
զբերութիւն՝ ի վրէժխնդրութի և՝ ի պատու-
հաս, որ՝ ի բարկացեալն է չափազանց.
պահէ զգօրութիս հոգւոյ յիւրեանց կար-
գի. և տայ իւրաքանչիւրսն գործել զը-

գործ իւր. խաղաղեցուցանէ զմարդ զկո-
վին. և առնէ ընդունակ ոչ միայն զիւր ա-
րարիչն ձանաչելոյ, այլ և ընտրել նմա լինե-
լոյ. ոչ հնարհեցաւ մովսէսի, վ'ս իւրոյ հե-
զութե։

Եւ ոչ յայս վայր ղկայ առնու հեզութիւն.
այլ ձգի 'ի մեղմել և զբարկութիւն ըն-
կերաց. իբր զի՝ մի միայն քաղցր պատաս-
խանի, և մի միայն գործ հեզութեամբ բաւա-
կան է 'ի ցածուցանել զսի և խլել զսպառն ա-
մենի. Թո՛ղ Թէ զայր ցասուցեալ։ Այլ վէ
րագոյն քան զամ այն է. զի հեզութիւն այն-
պէս վեհ է, և իշխանական, որ ձգի մինչև
յերկինս. ցածուցանել և զցասումն արդա-
րութեան այ, և խոնարհեցուցանել զնա 'ի նե-
րել ծանր ծանր յանցաւորաց։ Այ, որ
ընդդեմ դառնայ զայրացելոյ՝ քան զինքն
բռնադատի։

Լսակ կեանք հեզոյն՝ է ամէնէրջանիկ. զի
ոչ միայն հաճոյ է լինել նոյն իւրովամ, այլ և
ամ ընկերաց։ Այ՝ ամ ոք յօժարամիտ կեն
ցաղի ընդ հեզոյն. և ամ ոք խնդրէ առնել
զհաճոյս նորա։ Չեն արդ սրդեակ, քանի՞
պտղաբեր և գեղեցիկ է ածքինութի հեզու-
թե. և քեզն գայտ արա, Թէ չկայ արժան յափշ
տակիլ քեզ 'ի սէր նոր. և զամ փոյթ 'ի մէջ
առնուլ 'ի ստանալ զնա։ Այ մի՛ ինչ դըժ-
ուարին Թուիցի քեզ ընդ հակառակս
գնալ յօժարութեամբ բնութեդ, որ դիւրա-
մատ է յոյժ 'ի բարկութի։ Օ՛ն այս սեպ-
հական է կրօնաւորի, կանոնել զկերս, սան
ձա-

ձահարել զզգայուԹիւն. և պահել զներքին խաղաղուԹիւն սրտի։ Լայց դիցուք ԹԷ հե զուհն չունիցի ինչ յատացելոցս, այն ևԷՔ՝ զի առնէ զկրօնաւորն նմանօղ ինձ ՜ն՜ն իւ բուամ և վարդապետի, չլինելը քեզ քաւականն՝ ի յորդոր փուԹաջան լինելոյ առատացումն հեզուԹԷ. և ո՛չ յիրաւի էր գրաւել զիմ մեծաջան աշխատուԹիւն՝ ի ստանալ զառաքինուԹիւն ինչ ինձ հաճոյական, և կրօնաւորին պիտանի։ Ա՛չ կրօնաւորինն, այլ առաքինանալն առնէ զմարգ նմանօղ ՜ն՜ն իւ բուամ և վարդապետի։ Լա առ՝ ի վարել զնոս զաղաղական կեանս, չէ բաւական Թողուլ զաշխարհ, այլ պիտի և մեղմել զբարկուԹիւն։

Ա՛րդեակ. մի կարծեր, ԹԷ վասն լինելոյ քոյ կրօնաւոր, անբիևևան իցես՝ ի հարցնա ծոց Թշնամեաց քոց։ Օ՛ի սպառնալ առաւել Համարի, և ջանահնար լինի հարկանել զմի յիմոց ծառայից՝ որ կամ՝ ի կրօնի, քան հարկանել զբազում ՜ն՜ականս։ Ա՛յլ և ընտանի Թշնամիք, որ են կիրք, ԹԷ անմեռ են, չարաչար խոցեն զկրօնաւորս, վայ պարտ քեզ ունել վհատն ամուր ի պաշտպանել անձին, ՝ի բաց ՝ի քէն դարձուցեալ զհարուածս հակառակորդաց քոց։ Ա՛րդ զայս առնէ հեզուԹիւն, որ ո՛չ կուռի ընդ ԹշնաՄիս. այլ դիմանկալելով հարուածոց նոր յաղԹԷ։ Ա՛յլ և զհեզն ինեզուԹիս իւր մեծապէս վատահացուցանէ յիս. յորմէ քաջալերեալ նո՛ ո՛չ անկանի, և ո՛չ բարձրամտի ՝ի յաջողուածս. և այս է լինել վհատն, ո՛չ

միայն ՚ի ժամանակի պատերազմի , այլ և ՚ի ժամանակի խաղաղութեան ։ Ա ահաւասիկ օգնեմ ոմնմ՝ որ պինդ ունի զնա . բայց որ ընկենու զնա ՚ի ձեռաց , դիւրաւ խոցի . այսպէս հե զուխն պատասպարէ , զորս պինդ ունիմ զնա ։

Ողդեակ . յիշեա , զի Թողէր զ՚ , ՚ի ձա փել զքեզ ՚ի զբաղանձ նէր . և ՚ի մոռադրել անշքեաց խորհրդով հոգևոր կենաց և իմաստ ծառայութեան . արդ՝ Թէ ո՛չ լինիցիս հեզ , յերկոցունց վրէպ գտցիս ։ Օ՛ի Թէ բար կասիրտ իցես ՚ի կրօնսն , լեցիս և դիմադարձ . յորմէ և լեցիս ՚ի ծուխս և ՚ի զբաղանս . բայց Թէ հեզ լեցիս , ո՛չ կագեսցես ընդ այլ ոց . և զորս կամիմն կագել ընդ քեզ , ցածուսցես ողջք պատասխանեօք ։ Օգտ հե զուԹին և առ տենչ հոգևորաց և երկնայնոց . ոչք յայնժամ բորբոքեն զկամս առ ըղձանալ նմ՚ , յորժամ քաջ Ճանաչին ։ Վար կուԹին ամբոխեալ զհոգի , ո՛չ Թողացուցանեն քաջ Ճանաչել . բայց հեղուԹին հան դարտիչ նէր և խաղաղիչ , պատշաձն զնա ՚ի Ճանաչումն երկնայնոց . ոչք իբրև Ճանաչին ՚ի մտաց , և առաջի դնին կամաց ոմ՚ լաւ ինն , ընդդրկեն զնա ։

Ան զհեղուԹին յաւետարանական երանուԹի՝ երկրորդ դասեցի յետ աղքատուԹե հոգւոյ . և Հատուցումն նմ՚ Ճանաչեցի զերկիրն կենդանեաց , որ է դաւառն երկնային , ուր հեզք վայելել ունին յիս յաւիտեան . որ ոմ՚ յաստի կեանս եղէ վարդապետ և օրինակ հեզուԹե , նոյնպէս յերկինս

եղէց

եղեց հատուցումն հեղոց։ Այդ հեղիկ գառն
մի սիրոյ մարդկան. և դրօշակ իմ գառնն ։
Այսպա վայել է, զի որք զհետ եկիմ խմոյ հե
զուքեն դրօշակի, և մի սիրոյ խմոյ եղիցի
գառինք, վայելեսցին ընդիս յերկինս ։

Ով քանի՛ վայել էիցէ կրօնաւորի լինել
հեզ, և քանի՛ անվայելուչ՝ լինել բար-
կասիրտ, չէ՛ ինչ դժուարին իմանալ ։ Ի-
ձակ կրօնաւորին՝ և վիճակ խաղաղական,
և անդորր. և վիճակ օտար՝ ի ցասմանց և՛ ի
հակառակուեց ։ Յիմի յերիւրի ըս ածելոյն
կամաց. ոչ տրտնջել և ոչ քրթմնջել երբեք.
այլ գոհ և յիմի, և զիմ ընդունի՛ ի բարին ։
Այդ՝ այս ամ որպիսուհիք՝ գործք գոլով հե-
զուե, անհնար է թէ կայցեն առանց նը ։
Ով սորին հակառակն՝ ուրուրեք թափառո-
քի տարապայման բարկութի, ոչ լինին լաւ
լի, բայց եթէ ապառնալիք, թշնամանք,
գժդմնութիք, վրէժխնդրութիք և գան-
գատք առ բարձրեալն և առ ամ արարածս՝
որ ոչ գնան ըս հաճոյս բարկացողին. որոյ
արարք մի զի չեն առաքինորդեալ՝ի բանին,
այլ՝ի սրտմտութի, չեն բարի, և ոչ յա-
ռաքելերեն պտուղ բարի ։ Այդ՝ զիարդ կաց
ցէ ըս բարկութե կրօնաւորութին. որ է խա
ղաղական դպրոց կատարելութե, առաք-
նորդեալ՝ի Հոգւոյ Հեզութ ։ Ով իմ՚որ մարթ
իցէ կրօնաւորի կալ յաղօթս, եթէ ամբո
խեալ իցէ կրիւք բարկութե ։ Ով իմ՚որ կա
րօղ իցէ օգնել ընկերաց՝ի շինութե, եթէ
բարկութ յայլոց խելս իցէ ։ Այդեսակ, քնու-
թի

Թէ քո չէ օձային , այլ մարդկային . ապա կայն և այնպէս Թէ յաճախէ ի ցասումն , այնպէս գազանանայ , որ Հանդոյն Թունաւոր օձի խածանէ զՀոգի ։

Գ Լ Խ ։

Յաղագս Հեռուցման , որ Հարկաւոր է երջանկութեան ։

Ո՛րդեակ , արքայութենէն երկնից բռնաբարի , և բռունք միայն յափշտակէն զնա ։ Արդ Թէ կարծես զբռնամբ ածել զերկինս զբռնակերպութենէ , գգօնանօք մարմնոյ , և արձակեալսան հեշտասիրութենէ , տեղի տար լուռ Հաճոյից նոր , խոթիս . զի ո՛չ այս սանդուղք են որ Հանեն յերկինս . և ո՛չ այս գինք՝ որ յաղթեն նմ ։ Այլ բռնանալ անձին՝ մեռուցմամբ զդայական բաղձանացդ , և դիմամարտութենէ մարմնոյ՝ ի խնդրել նոր ինչ՝ որ Հակառակ է պահպանութենէ կրօնական կարգացդ , այն է Ճանապարհ ժառանգելոյ զերկինս ։ Այլ Թէև Հնար էր քեզ ստանալ զերկինս առանց մաքառելոյ ընդ անձին , և առանց ինչ վշտակրութեան , անմարթ էր ըղձանալ այդմ . որովհետև ես օրդի ոչ առացայ զնա բազում վշտօք , և մոխ յայն ընդ Ճանապարհ հեզութենէդ ։

Ապա կրօնաւորի , որ կամիցի առնուլ զարքայութիւն երկնից , այնպէ պարտ է բռնութեամբ առնել , մինչև ամենեցուն նոցա պատերազմիլ երեքութեամբք . և որ ոչն մարտնչիցի երեքութեամբք ,

քումբք, չունի յաղթանակել։ Հ՛Այս առա
ջինն՝ պարտ է նմ պատերազմիլ ոմն մարդ. զի
որովհետև պարտական է կեալ ըստ քնութե
իւրոյ բանաւորի, պարտ է նմ կեալ ըստ բա
նի. զոր ոչ կարօղանայ առնել, եթէ՛ ի պա
տերազմիլ իւրում, ոչ մեռուսցէ զզգայու
թիս, որք յոլովակի ապստամբին՛ ի բանէն,
որ ներսն է նց. և կամին տիրել՝ առնելով զոր
չէ արժան։ Մեռուցումն նուաճեալ զզգա
յութիս՛ ի հնազանդութէ բանին, տայ
կրօնաւորի կեալ ըստ կանոնաց բանի։ Հ՛Ա
և՝ պարտ է նմ պատերազմիլ ոմն քրիստո
նեայ, ՛ի բաց հատեալ յիւրմէ սրով մե
ռուցման զնմա՝ որ՛ ի քրիստոնէական օրի
նաց է արգելեալ։ Մ՛ոյ հարկ է, զի ոչ միայն
՛ի բաց կացցէ՛ ի գողութէ, ՛ի պանուտէ,
՛ի պոռնկուէ, և յայսպիսեաց ասափ, այլ
և՛ ի ցանկութէ այդպիսի չար գործոց. վա
զի օրէնք իմ վերկաքանչիւրն արգելուն։
Հ՛Ա յայմ և հարկ է՛ ի կիր արկանել ձիդն
և մեռուցումն. քանզի մի լուցկին և ապա
կանեալ քնութէն յօժարամտեալ մարդոյ
՛ի չարն, որ արգելեալն է յինէն, թէ ոչ
առնու զառաջս իմոց օրինաց, և վանէ զնա
կատակեալն այնց օրինաց, ոչ յերկիւղս յաղ
թանակել կարողանայ. և ոչ յերկրի կեալ
ոմն Ճշմարիտ քրիստոնեայ։ Ո՛չ հուսկն ասա
ցիկ. հարկ է նմ պատերազմիլ ոմն կրօնա
ւոր։ Կ՛րօնաւորն ոմն պարտապան է բազում
ինչ իրաց՝ որոց չէ պարտապան Ճիկ քրիս
տոնեայն, նոյնպէս ունի և բազում ընդդի
մակս,

մակս, և մեծագոյն դժուարութիւն. վասն պիտոյ է նաեւ զինել մեծ ևս մեռուցմամբ, և պատերազմիլ առաւել քաջութիւն։ Այո եւս ցանել կրօնաւորի զզգայութիւնս, զի կեցցէ ըստ բանի, բարի իմն է. և հալածել յիւրմէ զմեզս՝ ի պահել զպատուիրանս Աստուծոյ ընտրեցաց, լաւ ևս է. քանզի պարտապան առնել զանձն կատարելութեան, ևս պահպանութիւն իմոց խրատուց՝ աղքատութեան՝ ողջախոհութեան և հնազանդութեան, լաւագոյն ևս է. որովհետև ոչ միայն ի բաց կայ յամառնարժան իրաց. այլ ևս սիրոյ համոյ հրաժարել և ի բազում իրաց, որք յիւրեանց են օրինաւոր և քարի. որպիսի է տիրութիւն ընչից, ամուսնութիւն, և ինքնիշխան լինել, և սոյնպիսիք։ Այս սակս պարտ է կրօնաւորի լինել այնպէս մտահայեաց, որ մեկնել որոշեալ ի յայմ արարածոց, և յանձնել իսկ. և միայն պնդեալ ընդ Աստուած։ և այսպէս բուռն առնել՝ ի ժառանգել զարքայութիւնն երկնից։ Արդեակ, որ հայր յաշխատութիւնս՝ որ յայսոսիկ պատերազմունս, կարծէ թէ մեծ են և բազում. բայց որ ամբառնայ զաչս միտաց յերկինս, տեսանէ՝ թէ չէին արժանի պակիւն փառաց, որ պատրաստեալն է նմա անդ։

Այս մեռուցումն ոչ այլ ինչ է, բայց մահ հոգևոր. որ բառնայ ի կրօնաւորէ զայմ զգայական և զանկարգ կեանս. բառնայ և զչար գործս, որ յառաջ գան ի զգայական կենաց. զորօրինակ և մարմնաւոր մահն զրկէ

զրկէ զմարդ՝ի բնական կենաց, և յիմ բը նական գործոց։ Այլ զի՝ այն է ձշմար տապէս մահացեալ կրօնաւոր, որ մեռեալ է առ սէր անձին. մեռեալ է առ անձն իւր. մեռեալ է առ իղձս զգայութեանց. և կեաց ել պայմանի իւրոյ կրօնի, որ տայ նմա լի նել կրօնաւոր և հոգևոր։ Ոչ է հնար կեն դանի լինել հոգւոյ, թէ ոչ նախ մեռանի զգայականութենն։

Այսու կրօնաւորք որք մահանան՝ իմի ինչ, և ոչ փոյթ է նոցա մահանալ յայլ իրս։ Այեռութիւն՝ որ չէ անթերի, և առ հա սարակ յիմի, չէ ինձ հաճոյ. զի ոչ մտանէ հոգի, ուր զգայականութիւն չէ գլխովին մա հացեալ։ Ասոյնն կապեալ յոգւոմբք կա պանօք, եթէ մի՝ի կապանացն կացցէ, թէ պետ և այլք կարեսցին՝ չէ ազատ, և չէ կարօղ թռչել։ Ա՛ստ է կրօնաւորի մի միայն պակա սութի՝ խափանելոյ զնա՝ի յառաջադիմութենէ կատարելոյն։ Զեն ինձ հաճոյ և այնք կրօնաւորք, որք սկիզբն առնեն մեռուցմանն. բայց ապա յաղթեալք՝ի զգայականութէ, կ՚ի՛ հեղ դառնան, ձեռնթափ լինին։ Այեռուցումն, որ ոչ տևէ մինչ՝ի մահ, կորուսանէ զվարձս։ Յաղթութիւնն ոչ ստացանի՝ի սկիզբն մար տի, այլ՝ի կատարածի։

Այսու և այլք, որք կարծեն մեծ ինչ գոր ծել՝ի՝ձեռնհել զկիրս իւրեանց՝ և զբար յո ժարութիւս, չթողացուցեալ առնել գործս արտաքինս անվայելս. և այսմիկ թուին յաչս անձանց, թէ են մահացեալ։ Այս

այս մեռուցումն կրօնաւորական. Էր զի այնք կիրք և չար ունակութիւնք ոչ մահանան, այլ ծածկին միայն, զի մի բողբոջքն արտաքս ցցուիցին։ Որ Թողաւ չինքեան զարմանան անկատարութիւնք, Թէ ոչ բողբոջք այսօր, բողբոջեսցի վաղիւ. և վաղցդոյն կատեսցի կրօնաւորն՝ի խափանելոյ ըզչար բողբոջան, քան արմատն յընձիւղելոյ։ Այնք կրօնաւորք Հաձոյ են ինձ. որք ոչ միայն խափանեն զարտաքին չար գործս, այլ և ներհակսն ներգործութիւնք արմատաքին խլել ջանան զչար ունակութիւս, և զանկարգ սխորժակս, որք արմատն են անկատարեաց։ Այս է ճշմարիտ մեռուցումն՝ որ մեռուցանէ զչար գործս, և զսկզբունսն նոցա։ Կամիս վաղ ցամաքեցուցանել զբուրվտակաց, ցամաքեսցի զաղբիւրն։

Ընդեակ. քաջ գիտեմ Թէ յոյժ անհաձոյ է քեզ յանձին զգալ զներքին հակառակութիւն, և զանդադար մարտ, որ՝ի մէջ մարմնոյ և հոգւոյ, ՝իմէջ զգայուԹե և բանի։ Այս նիւթ, զի մարդ ոչ ստեղծաւ այսպիսի գժտութիւնք, և ոչ այսպէս եղև՝ի դրախտին. ուր վՀզի հնազանդ էր զգայութիւն բանին, և մարդ՝ի բուռմ արարչի, եղև անդ գերագոյն խաղաղութիւն, և ծայրագոյն միաբանութիւն. բայց ապա մեզացն ապստամբեցուցեալ զստորինն մնան՝ի վերնոյն, խռովեաց զնաղաղութիւն։ Ընդ՝ Թէ կամիս զառնալ անդրէն յառաջին վիճակ խաղաղական, Հարկաւոր է մեռուցումն, որոյ գործ՝ է նոճաձել զմարմինն՝ի ծա-

ծառայութեի հոգւոյ ՚ն՚ն իւրոյ օրինաւորի. և զզգայուխն ՚ի հնազանդութեի բանի. և այս է ձանաչարկ միւսանգամ առանձալոյ զկո րուսեալ խաղաղութիւն : Ա՚ն զի ՚ի միաբանել զերկուս պատեհագործ թէշամիս , հարկ է թէ մի ՚ինոցանէ տեղի տացէ միւսումն . և ո՛չ վայելէ , թէ հոգին ըլ ձեռամբ նուաձեա ցի մարմնոյ իւրոյ ծառայի : Ա՚ն , քանի յետ սահման է կրօնաւորն , որ ո՛չ սրտի մտօք գիրկս արկանէ մեռուցմանն . որովհետև յայտ նի ցուցանէ փորձն , թէ ուր ո՛չ է մեռուցումն անդ թագաւորէ զգայականութիւնն : Ո՚րդ՝ զի՛նչ բարի պատուղ յառաջգայցէ յայսպիսւոյ չար արմատոյ . զինչ բարի գործել կարօղ իցէ կրօնաւոր անձնասուր ՚ի զգայու թիւն : Ա՚ն ՚ի միասուց՝ զոր առնէ զգայա կանութիւնն , է՛ այն , զի ո՛չ կասի երբէք , մինչև հասուցէ զկրօնաւորն ՚ի յետին թշո ուառութիւն հոգւոյ և մարմնոյ : Նակ մե ռուցումն փակեալ զկիրս յիւրեանց կոպա րի՝ հասուցանէ զկրօնաւորն առաքինու թիքը ՚ի կատարելուի : Օ՚ի զորօրինակ ան հնար է ժամանել ՚ի կատարելութիւն առանց առաքինութեց , նոյնպէս անհնար է առա նալ զառաքինութիս առանց մեռուցման :

Տ՚ը , այդ ՚ամ զոր ասես , է՛ ՚ամիւ՛ ձմարիտ . բայց քանզի այնչափ բազմապատիկ ան կարգ իղձք կան ՚ի մարդ , այնչափ անզուսպ կիրք , այնչափ զգայութիւնք , և չար յօժա րութիւնք , զինչրդ հնար է տառապելոյ կրօ նաւորին զդէմ ունել այսչափ ներհականաց՝

Ա՚ր

Որ երբեք կարօղ էիցէ մեռուցանել զայս չափ ամէհի գազանս ։ պարտ էր զսիւն և զդիւլեր կալ խարազան ՚ի ձեռին ։ Այլ չէն հինչ զարմանք , Թէ կրօնաւորք ումանք չէն մնհայեալ յանմի , և այլք ոչ հանապազորդեն ՚ի մեռուցման ։ Որդեակ , կարծես Թէ դուն իցես առաջինն ՚ի տալ զանձն կրթուէ մեռուցման ։ Հասցումբ եղէն յառաջ քան զքեզ , որք մնհայուցել զանձինս յաստիս՝ արիաբար մարտեան , և արդ վայելեն յերկինս զպտուղ մեռուցման ։ և այժմ ևս բազումք կեան ՚ի կրօնսի , որք տուեալ են զանձինս մեռուցման ։ և կան ինձն յայնմ՝ յօդուտ իւրեանց , և ՚ի խնդուքն իմ ։ Այլ մի Թուիեցի զքեզ խիստ լինի և անշուր , Թէ պարտ է հանապազ զինն ՚ի ձեռին կալ ։ Այլ Թէ աստի կեանք , (ըստ ասելոյն յօթեայ ծառայի իմոյ) է անդադար պատերազմ ։ ապա կեաըն է անդադար պատերազմիլ ։ ՚Ի պաշարիլ քաղաքի Թէ Թշնամիք նը զցայգ և զցերեկ ՚ի վր յարձակին , պիտոյ է և պահպանդաց զսիւն և զդիւլեր կառնիլ ։ Այդ՝ Թէ կամիս զօդ պահել զքաղաք հոգւոյ քոյ , զոր զցայգ և զցերեկ բաղեաքն կիրք , որ են նը Թշնամիք , զնարդ ոչ մարանչիցես զսիւն և զդիւլեր ՚ի պաշտպանել նմ ։ Այլ Թէ առ առնուլ դրեակ մի յերկրի , այնչափ Ճիգն յանձն առնուն , մինչև դնել զնկեանս , քեզ զիարդ մեծ Թուիցի մեռուցումն անձին ՚ի ստանալ զերկինս ։ Յոր անվախձան յաղթանակաւ ցնծան ։ Յուցանես

լինել քեզ կարի լաւն գործ ։ Օ՜ հնազոր՝ որ մեծ հաւատարի գաշխատութեան, վաղվաղակի լքանի ։ Ո՛չ մի երկեցուածք զքեզ քաշ- մանքեն բազմերկնեակ կրկից հակառակողաց. զի Թէպէտ զօրութք քով չես բաւական ըզ- գեմ ունել բռնութեն նոց. սակայն օգնա- կանութիւք խնդց հնարհաց ոչ միայն կարող ես պաշտպանել անձին, այլ և պարտել ըզ նոս, և ջնջել խաչառ ։ Ո՛ւր կրճնաւոր կամի, Թէ մահ գնա մահացեալ գտցէ. այլ սա- կաւք կամին զի ինեն մահացեալ ։ Ո՛վ Թէ խոր շնա դու՝ ի մեռուցմանէ՝ ի կեանս, գիարդ գառանիցիս մահացեալ՝ ի մահու ։ Օ՜ հնարին առացիկ. այնպ մեծ ես հատուցումն մեռուց մանն, մինչև արժան ես գնամ Ձիգն յանձնառ նուալ մեր նոր ։ Ո՛ւաջ զօրականն՝ ի խրախու- սել յաշխատութիւս մարտի և յաղթութէ, առեալ խոկայ զհատուցումն ։

Գ Լ · Ը ։

Հաղագս ընտրողութէ, որ վայել է կրճնաւորի ։

Ո՛րգեակ, որ ոչ ունի առ իւր կշիռ արդար, դիւրաւ սխալէ՝ ի կշռելն ։ Այն պէս որ յառաւ իւր ոչ ունի ընտրողուէ, այն պէս սխալէ, որ բազում անգամ չէ հնար ելս գտանել ։ Ո՛վ Թէ կարի լաւն մեղկ ես՝ ի ձնշել զմտրմնդ, վաղվաղակի խակ տեսցես, զի ապստամբեսցի և անկուշեսցէ ։ Ո՛վ Թէ անընտրողութէ զնա գանեսցես, նուաղես ցի, և ոչ ես կարող լինի քառնալ զբեռն, և

ծառայել հոգւոյդ։ Ո՛չ ընտրողութիւն պէտք
են քեզ. որ ուսուցանէ արդար կշիռ վարել.
զի մի առաւելուցու և մի նուազեցուն՝ զքո
ժանն. և այս է աղն՝ որով համեմին ուռք մարդ
կան, զի իցեն առաքինի և լինիմ հաճելի։ Ընդ
անգամ որ չափով դնայ, յառաջ հասանէ
քան զնրաւարն յերեսաց։ Ա՛ւ զի որ ան
ընտրողութիւն վտանգ, թէ ո՛չ անկանի,
ասկայն պարտասի. և այնպէս կամ ո՛չ հա
սանէ, յո՛ դէմ եդեալ էր, և կամ հարստանչ
հասանէ։ Այլ որ չափով դնայ, ո՛չ դիւ
րաւ գթէ, և ո՛չ վաղ պարտասի։

Ա՛վ, քանի՛ միտս գործէ անընտրողութիւն մա
նաւանդ անձանց կրօնաւորաց և հոգևո
րաց, որք ի՛ ձիւնս, ի խոստմունս վարս, և
ի խոշտանգանս մարմնոյ՝ ո՛չ կամին առաջնոր
դել, և ո՛չ խրատ։ Այսոցիկն առնել լինի հա
ճոյակին ինչ, ի լսել զանձինս պահօք, ձաղ
կանօք, խարազնադեղութիւք, և հակումամբ
առելւոյ քան զարժանն։ Քայց խոթելին՝ զի
քարին՝ որ ընտրողութիւն գործի՝ առաքինու
թիւն է, և լինի հաճելի. իսկ որ անընտրո
զութիւն, մեղութիւն է, և լինի անհաճոյ։ Ա՛յ
հոգւոյ եռանդն է այս նոյն, այլ անընտրո
զութիւն զայրոյթ. որովհետև՝ ի սուղ ժա
մանակի այնպէս տկարանայ, որ անձանց և
այլոց լինին անպիտան։ Այլ ի ձիւսվարել կա
րի իմն խթանի զերիվարն, կամի զձանա
պարհայն. զոր չիրաւի թողացուցանեմ՝ ի
պատիժ հպարտ անընտրողութեանն. զի թէ
խոնարհեալ էին խոստովանահոյդ իւրեանց

կիմ մեծաւորաց՝ անսալ առաջնորդութե՛ն նոյ
ի՛ հոգևոր Հանապարհի , ո՛չ արդեօք ան_
կանելին յայնչափ անկարգութի՛ս : Զ՛զանց
պարտ է այնպիսի լինել , որ նկուն արասցեն
ո՛չ զբնութի՛ն , այլ զախտս քնութե՛ : Վա՛յ
նո՛ր լաւ ևս առնելին . և քանի՛ առաւել Հա
ճոյ լիներ ինձ , եթէ միաբանելին զձգունս
խրատանց ընդ երկու երևելի առաքինութի՛ս .
ընդ խոնարհութե՛ , Հպատակեալ կարծեաց
հոգևոր Հարց խրատանց՝ զի առաջնորդես_
ցեն նոյ . և ընդ հնազանդութե՛ կատարելով
զպատուհեր նոյ : Յայսիսի առաջնորդութե՛
դնային ապահովագոյն , և առանային առա
ւելագոյն արդիւնս : Ա՛յլ ոք երբեք եղև՝ ո՛չ
քաջ առաջնորդ , և ո՛չ քաջ դատաւոր
անձին :

Արդ ևս սկսաւմն գործոյն բազումք ի՛
նոցանէ , որք ի՛ հոգևոր կեանս ինքնագլ
խաւ կամին առաջնորդել անձանց . և այն
է , զի տուեալ զանձինս ի՛նիհարացուցա_
նել անչափ զմարմինն , այնուհետև չի՛ ինչ
նոյ փոյթ զախտից հոգւոյ : Այլ թէ չկայր
ինչ այլ՝ բայց ևթէ չկամիլն ի՛ հոգևոր Հա_
նապարհի զառաջնորդութի՛ն այնոց , որոց ե_
տուն իշխանութի՛ն առաջնորդել փխկ իմ ,
ո՛չ իցե այս պակասութի՛ն յառաջեկեալ ի՛
Հպարտութե՛ , և սխալ կամաց վտանգաւոր
յոյժ : Ա՛րդ՝ զի՛նչ օգուտ իցե կրօնաւորի
քուրձ զգենուլ ի՛ վե՛ր մարմնոյ , և յոգւոյն
պինդ ունել զիւր կամս , որ է սխորժակ
անկարդ : Ա՛ող զայն՝ զի բազում անգամ

մնափառութին դըդէ՝ առաւել միտ դնել ձը
գանց արտաքնոց՝ որ երևին այլոց, թէպէտ
և անընտրողութ գործին. քան ներքնոց, զոր
այլք ոչ տեսանեն, քայց ես տեսանեմ, և
մեծ համարիմ զայն. որովհետև յայս իմ
ոչ այնչափ մեծարգի է խաղութի վարուց,
որչափ մեռուցումն ախտից հոգւոյ։

Այլ և ինձան, զոր անընտրողք առնեն
այլոց, չի՛ ինչ փոքր. վ՛ն ղի որք զհետ
երթան օրինակաց նոցն, նմանիլով լինին ան-
ընտրողութեն, որ է մեղութի, և պատճառ
քաղցմ փնասուց։ Այլք տեսեալ զդժպա
տեհութիս և զիւիմանդութիս, յոր անկան՝
որք անճնաոտեալն էին ի՛ ձէռնս, նահան-
ջին յայսպիսի քարի և՝ եթ գործոց, երկուց-
եալ ընթ և ինքեանք փնաս գործիցեն առող
ջութե անձանց։ Այլ ոչ ամենեքին գիտեն
որոշել. թէ այնք չարիք ոչ ի՛ ձէռնս յա-
ռաջ եկին. այլ յանընտրողութէ, և՛ ի հպար
տութէ այնց, որք ոչ յայտնեն զիւրեանց իրս՝
ում պարտեին։ Այր ոչ զգուշանայ յայսմի-
նէ՝ որ չար է անձին, և փնասակար այլոց,
վձարել ունի վ՛ն անձին և վ՛ն այլոց։

Տ՛ը, որովհետև մարմինն է մի յերկից գլխա
ւոր թշնամեաց մերոց, և այնպէս նեղա-
ցուցիչ, որ գտիւ և գիշեր դարանակալ
է մեր, զնաթրդ ոչ կամի՝ զի չարչարես-
ցի։ Ոչայ ես ի բազմաց՝ ասել, թէ որ
կարի ինձ խնայէ ի մարմին իւր, մեռա-
նի զՀշնամի իւր, և զգրգռէ զնա պատե-
րազմիլ ընդն։ Այս ոչ լաւ և է, թէ
մար-

մարտիցուք ընդ նմա . զի մի յարիցէ ՚ի վէր
մեր , և խոովեսցէ զմեզ : Այլ չիք վտանգ
տարապայման նիհարացուցանելոյ զնա . զի
զի եաւ է ՚ինձ գիրս , Թէ ո՛չ ոք երբեք ա-
տեայ զմարմին իւր : Այդպէսկ , ասէ գիրդ և
ղայս ասեն , Թէ պաշտօնին ինձ մատուցելոյ
պարտ է լինել բանաւոր և ընտրողութ , զի
մի՛ անցցէ ըստ պայմանաւոր սահմանն : Կամիմ
զի մարմինն Ճնշեսցի և պատժեսցի , քայց
ընտրողութիւն և չափաւորութ . և Թէպետ
մարմինն Թշնամի է քոյ , քայց յիշեա , զի է
և գործի Հոգւոյ : Ա՛յ այնպէս պարտ է նի
հարացուցանել զնա , զի մի՛ ապստամբեսցի ՚ի
Հոգւոյ . և միանգամայն կարօղ լինի ծառայել
նմ՚ի գործանդ : Այլ Թէ գուն տարապայ-
մանս տանջես զնա , հիւանդանայ . և այնպէս
ո՛չ միայն տկարանայ ծառայել քեզ , այլ և
հարկ լինի այլոց ծառայել նմա : Այդ քա-
րոզ գնալ պիտոյ է ՚ի ծայրից խորշիլ ,
ոմանս յայտնի փորձէ ստանալ ( )
էլուցուն մեզս ՚ի մեզանէ վէր . և են
պինք , որոց տկրել է նա . Այլ զորս տա-
տաքոյ են ցանցել նոքա , փորձէ պատրուակաւ
քարոզ ՚ի կործանումն . առաջի եդեալ նոքա ,
Թէ յարգական լինի կրօնաւորաց , և վայել
չական , քան Ճնշել զմարմինն յերկար տրտ-
նութ , խիստ խարազնադեցութ , և այլովք
Ճգամբք . ոչ արարին նմա հարքն անապատի ,
որք արդ վայելեն յերկինս , և ՚ի զինուո-
րեալ եկեղեցւոյ եղեն մեծանուն : Այլ ոչ
առաջի առնէ խորամանկ Թշնամին , Թէ

ոչ զի այս գործք լինիցին բարի և լինաձ հաճելի, հարկ է զի լիցին չափով ընտրողաւք։ և ոչ առաջի առնեն, թէ մի՛ զի խառնուրդք և զօրութիւն մարդկան չէին հաւասար, էր անկ ամենեցուն զնոյն առնել։ իբր զի որ միւսոյն է չափաւոր, միւսումն է չափազանց։ և ոչ առաջի դնեն, թէ հարկ է մի՛ այսր խորհուրդ հարցանել՝ ի հոգևոր հարց։ առանց որոյ ոչ ոք գնայ անքոյթ ըստ ճանապարհ հոգևոր։ Այդեակ, մի՛ զի սատանայ հնարի քեւ խաբել զքեզ։ եթէ ոչ կամիս խաբիլ՝ ինձանէ, ի ջերմեռանդութիւս և՝ ի ճգնութիւն քո՝ մի՛ վըստահանար յանձն։

Ասել է եւս կրօնաւորի յայտ՝ ի գործս իւր գնալ ընտրողութիւք, զի ըստ կանոնադրութիւք գոլով, պահանջէն իրաւունք, զի յայտ գործք իւր իցեն կանոնեալ։ և այս է գնալ ընտրողութիւք։ Այլ եւս պարտ է, զի յայտ առաք կրօնաւորի լինիցին՝ ի փառս իմ։ իսկ զի՞նչ փառք իցեն ինձ, եթէ լինիցին մարդկան, և առանց ընտրողութ։ Որ ոչն է ինձ հաճոյ, էլ ինձ՝ ի փառս և՝ ի պատիւ։ Ցեսարդ, սրդեակ, եթէ անընտրողութիւն՝ ի պահս՝ ի ճգնութիս, և յայլ այսպիսի բարի գործս այսչափ անհաճոյ է ինձ։ քանի՞ առաւել անհաճոյ լինիցի, եթէ անընտրող իցէ կրօնաւորն յուսել՝ յերմնել՝ ի ինքեան, և յայլ գործս, որք չէն յիւրեանց բարի, այլ անտարբեր։ Զանի՞ առաւել անհաճոյ լինիցի, եթէ ի գործս՝ որ չար են, առնիցէ աւելացանցուն և անընտրողութ։ Եթէ անընտրո-

բողոքին յիւրմէ ե չար, ապա ըլ չարի լծոր
դեալ՝ չար ևս լինի, և ինձ առաւել ևս ան
հաճոյ։

Ընտրողութիւն ե հարկաւոր, եթէ մեծա
ւորաց՝ որք առաջնորդեն, և եթէ հպա
տակաց՝ որք առաջնորդին։ Մեծաւորաց՝
ընտրողութիւն որ դուստր ե դորովանին գթոյ,
ուսուցանել լինել դորովական հայր, կարե
կից լինել հպատակաց, չծանրաբեռնել ըզ
նս աւելի քան զարժանն, և քան զկար զո
րութիւն նոց։ Իսկ հպատակաց ուսուցանել ընտ
րողութիւն պատկառիլ՝ պատուել, և հնա
զանդիլ մեծաւորաց։ Իսկ, քանի՞ անհա
ճոյ ե ինձ տեսանել զհպատակ զոք՝ որ ան
ընտրողութիւն գնայ ըլ իւր մեծաւորս։ Ան
ընտրողութիւն՝ որ դուստրն ե անգթութիւն,
և քոյր խստասրտութիւն, հպատակին չարչա
րել զիւր մեծաւորս, ցուցեալ զանձն դժկա
մակ ի հնազանդութիւն, և ցուի ի բարեկար
գութիւն։ Իսկ դիտեմ ես, քանի՞ հեծու
թիւնք և հառաչանք տառապելոց մեծաւո
րաց հասանեն յերկինս, վն խստութե հպա
տակաց։ բայց վայ որոց լինին այնմ պատ
ճառ։ Ընդհանարտութիւն որ մեծաւորաց
լինի՝ ինձ լինի. և քննել գնա և պատժել,
ինձ հասանի։

Գ. Լ. Ա։

Յաղագս անպարբերութեանն, որ հարկաւոր է կրօնաւորի։

Ա՛րդեակ, բազում անգամ լուեալ է քոյ, Թէ կրօնն է դպրոց կատարելութեան. և արդարև այդ այդպէս է։ Ա՛յլ որք մտանեն ոչ յայն՝ չեն կատարեալ. այլ մտանեն՝ ի լինել կատարեալ՝ ի կրօնաւորական բարեկարգութիւն։ Ա՛շակերտն՝ որ սկիզբն առնէ գնալ՝ ի դպրոց, ոչ այլ ինչ խնդրէ, քայց եւս լինել՝ ի տգիտութիւնէ, զի ապա կարող լինի յառաջել յայլ գիտութիւնս։ Ո՛ միջոցք հատանելոյ առ այս իւր վախճան, չասէ, Թէ կամիմ ուսանիլ զայս ինչ կանուն. կարդալ զայն ինչ գիրս, և առնուլ զայն ինչ դաս. այլ է անտարբեր. և զայսր ամի հոգ Թողու բաղդաւիճն իւրում ուսուցչի. շատ է նմա լինել պատրաստական՝ ի կատարումն ամի, զոր ուսուցիչն ձեռ պատուիրէ։ Ա՛յնպէս ոչ գնոյն առնէ կրօնաւորն, ոչ եւս եւս յանկատարութեան։ այլ բազումն սխալէ՝ ի կրօնաւորական բարեկարգութեանէ։ Ա՛ւր գործ այն է, զի փափաք և անձուկ ունիցի կատարելութեանէ. քայց՝ ի միջոցս՝ որ սեպհական են կրօնին, պարտ է նմա լինել անտարբեր. և զհոգն Թողուլ՝ ի մեծաւորն, որ առաջնորդ է նմ։ Ա՛յդ՝ այն կրօնաւոր է անտարբեր. որոյ կիրք հանգիստացեալ կան, և ոչ միտեն յայս ինչ քան յայն ինչ. այլ են պատրաստական՝ ի կա-

կատարումն ամի, որ ի մեծաւորէ իւրմէ պատուհասի։

Անհատքերութիւնն դուստր է յանձնարարութեան կամաց, և առանց սը՛ չկարէ կալ նա. մինչ զի կրօնաւորն՝ որ չէ քաղցրացուցիչ յանձն եղեալ՝ եթէ ըստ անձին, և եթէ ըստ իրողութեց իւրոց՝ ի հաճոյս իմ, և մեծաւորացն՝ որք կան ի տեղի իմ, չէ և չասի անհատ քեր։ Այլ, քանի՞ բարկացուցանէ զնա կրօնաւորն, որ՝ թէ պատուհասի ինչ նիմ՝ ի մեծաւորէն, ասէ յօժարամիտ լինել՝ ի կատարումն, բայց և կամի զայս ինչ կիմ զայն ինչ. և թէ ոչ շնորհի, գանդատէ, դժկամակի, և երբեմն զանց առնէ կատարել զպատուհասեանն նիմ։ Այլ է այս յանձնարարութի կամաց, և ոչ անհատքերութեն. այլ ազգ ինչ դաշնագրութե։ Այր ոք՝ ի յանձն առնուլն զհնազանդութե, ՝ի վր բերէ, (բայց.) կամի ցածագին վճառ ընդունել։ Ասէր՝ առնեմ, բայց կամիմ, կիմ կամիմ, ցուցանէ թէ ան մեռ ես ի քեզ, և դեռ չես հրաժարեալ ՝ի կամաց քոց։ Այլ և յոմն, յորժամ այր երէց անձինդ, ՝ի սակարկել ըստ մարդկան զգոյն ասէիր, թէ կամիմ կիմ կամիմ։ Այսպա կամ դու ոչ թողեր զն. կիմ ոչ եթող զքեզ։ Այսպէս գնել զմի ոմն յերկուս ասպանդակս, և ծառայել երկուց տէրանց։ Այլ թողու ն, զորս ոչն կամին թողեալ լինել՝ ինամանէ։ Տ՛ր, թէ անտարբեր եմ ես, և պատրաստական առ առնել զպատուհասեանն ինձ, ով ապահովէ զիս, թէ լաւ ես իցէ այն վճռ

հոգւոյ և հանգստի իմոյ : Արդեակ , թէ ջանասցես դու առնել յո միտէ յօժարութեանդ , ով ապահովել զքեզ , թէ այդ լաւ ևս իցէ վո հոգւոյ և հանգստի քոյ : (2)Զոմն հոգ ւոյ դայ չինէն , և զայն հաղորդեմ միա ցելոյն ընդ մեծաւորի՝ զոր ետուն նմա՛ի կրօնի : Արդ՝ թէ դու առ ի չգոյէ անտարբերուե թատնուս ի նմանէ , վրէպ գտանիս յամ պարդևաց և չնորհաց , զոր չնորհեմն հպա տակաց ձեռամբ մեծաւորաց : Այլ ևս , թէ արդարև որդի ես դու հնազանդուե , լաւ կա մաբել ունիս զայմ՝ զոր քո մեծաւորդ պատ ուիրէ . երբ չերևինն ինչ մեղք . և թէ ես անտարբեր , յօժարամիտ պարտապան ես կատարել զայն . զի թէ կայցէ ինչ անդ որ խաղումն , ոչ քոյ է , և ոչ քեզ համարի՛ ի յանցանս , և ոչ յայս սակս կորուսանես զարդիւնս : Արծնաւոր բարի ոչ քննէ , թէ հրամայեալն լաւ իցէ , թէ չոռի . շատ է նմա՛յն , զի մեծաւորին լաւ թուիցի :

Ասն ոմանք , որոց խիստ թուիւ կալ՝ ուր հնազանդութիւն կամի , և գործել զոր մեծաւորն յանկաւոր համարի առ իմ ծա ռայութիւն . վասն այսորիկ խոտովին , և գրժ գոհեն , առագրեալ զայս իւրեանց խոր ոմովութիւն և դժգոհանս՝ տեղւոյն՝ յոր կան , կիմանձանց՝ ընդ որս կենցաղին , կիմպաշտօ նին՝ զոր վարեն . վայ և ժամին փոխել զտե ղին կիմ զպաշտօնն : Այլ բարեաց դարմանա ծն , յորժամ պատճառ հիմանդութեան ոչ գտանի , զի այս ձանապարհ է բուժելոյ . զոա-

գտանել պիտի զսկիզբն հիմանդութեն, որ
են անմեռ կիրք, յառաջ եկեալք յինքնա-
սիրութէ. և այն է, զի կրօնաւորն չէ ան-
տարբեր, և ոչ բոլորովին յանձն ի կամ
մեծաւորին. համարիցիս, թէ այլ տեղի
մեռուսցի զայդ քո անկարգ կիրս. կիմ թէ
բարձցի՞ ի քէն զինքնասիրութիդ. վոխեցն
զմահիձն՝ ոչ բառնայ զտենդ չերմուտին.
այլ երբեմն առաւելու և. և թէպետ այն
փոփոխութէ թուի թէ առ վայր մի մեղ-
մ զտասն, բայց փութով դառնայ մեծ
և տագնապաւ. այս անցք անցանեն և ընդ
կրօնաւորն. որ ընդ իւր ունի զպատճառ իւ-
րոյ անհանգստութէն, որ են անկարգ կիրք.
և թէ զայս չար արմատ ոչ կարես տապա-
լաւ մեռուցմամն, որչափ և փոխեսցես զտե-
ղիդ, միշտ և և յոռասցիս. վ՛ն զի հիմանդ-
դութիւն որչափ յամենայ, այնչափ զօրանայ,
և դու վնէպ գտցիս յանտարբերուէ. այլ
ասա ինձ. եթէ լինելիր փոխեալ այլուր, կի՞
թէ փոխէին զքո պաշտօնդ. սակայն և այն
պէս գտանէիր անհանգիստ, և չար և, ոչ
յոլովակի պատահէ, զինչ արդեօք առ-
նէիր. եթէ խնդրէիր և անտի և երթալ
այլուր, այդ լինէր աստանդիլ խոպառ ի
ինաս քո, և ի չար օրինակ այլոց. սակ թէ
չանայիր մահացուցանել զքեզ ուր կաս, և
բառնալ զառիթ անհանգստուէ քոյ, զայդ
կարող ես առնել՝ յոր վայր եդ զքեզ Հնա-
զանդութիւն, չերթեալ ի խնդիր թշուա-
ռութեց որ արտաքոյ՝ և չինութէ գործել

որոց

որոց ձանձրանայիցեն զքեզ անհանգիստ, անմեռ, և յանդիմանեսցեն զքեզ։ Յորում չէք եռանդն Թէպետև յերկինս իցէ ը հրբեշտակս, սակայն և այնպէս եղիցի ի ծուփս։ Ա յլք այնպէս կասկած են ոչ ասեն ինչ, որ իբրև տեսանեն Թէ մեծաւորն կամ ի փոխել ինն անտի, խռովին և գժգոհին. և որ չար ևս է, կարծեալ Թէ յայնմ վայրի օգուտ գործեն՝ և ինձ ծառայեն, հասին զմեծաւորն անխոհեմ, և աննախանձաւոր. և եթէ ընդէմ կամաց իւրեանց առաքին այլուր, ոչ միտ դնեն գործոյ ինչ, խոռովեն զայլս, և կեան ի ծուփս։ Հնար ինչ իցէ այսպէս ընչին համարել զանտարբերութիւն, որ պահէն ե կրօնաւորի։ Ի կոչել իմում զքեզ ի կրօն, ուր դու կամիս՝ անդ քնակեցուցանել զքեզ խոստացայ, Թէ ուր եան կամիս։ Վասն ցուցանես, Թէ ի ծառայել ինձ, առաւել զքո հաձոյսդ խնդրես՝ քան զիմ։ Ա վ Թշուառութիւն. չէք կրօնաւոր, որ ոչ համարի և խոստովանի Թէ բարի է, նա՝ հարկ է իմում ծառայի անտարբեր լինել, և չիս յանձն. բայց ի գործ մատուցեալ՝ ամ ոք գժոխարին։ Օ ինչ օգուտ է հեծելոյն ունել աչխոյժ երիվար. եթէ չԹողու նա՝ վարել ը կամն։ Օ ինչ պիտի ինձ ծառայ, Թէպետև ձարտար, եԹէ չԹողու ինձ ի գործ արկանել. և չկամի առնել՝ ոչ եան կամիս։

Ա սա ինձ ուրեակ. ոչ լաւ իցէ քրիստոնէի, յայնմ՝ որ չի հրամայեալ կամ արգե-

դեղեալ յօդինսայ՝ կալ անտարբեր . և պատ
րաստական առ ընդունել յիմոց ձեռաց՝ որ
ինչ հաճոյ է ինձ . որպիսի են , զաւակս ու
նել կիմ չունել , առողջ լինել կիմ հիւանդ ։
Այրի իսկ քաջ . զի ոչ գիտեալով ներ , որ ա
ռաւել օգուտ իցէ փրկութեանն հոգւոյ իւրոյ ,
պարտ է նմա թողուլ յիս . և այս է լինել
անտարբեր ։ Ով Աշմարիտ իցէ այս , ոչ է
իսկ , զիարդ դու կրծնաւորդ ջանաս զայս
սրտաւորութիւն առնել , և ոչ զայն . յայս
ինչ տեղի բնակել , և ոչ յայն ինչ ։ Օ՛ թ
գիտես , որ լաւ իցէ փրկութեանն , հանգստի՝
և կատարելութեանն քոյ ։ Որ ոք չէ անտար
բեր , դժուարայուցանէ զառաքինութիւնն
և առնէ տարժանաւոր ։ Որ ոք չէ անտար
բեր , և ոչ է յանձն յիշխանաւորս իւր , յո
լովակի հետամուտ լինի գործոյ , որում չէ
ձեռնհաս ։ վ՛ն զի ոչ ոք է ուղիղ դատաւոր
անձին , վ՛ն ըղձին՝ որ խաբեն զնա ։ Որ ոք
չէ անտարբեր , թիւրեն զկարգ ուղիղ ա
ռաքինութեանն . իբր զի ոչ պատշաճեալ ներ
զիւր կամն կամաց մեծաւորին , ոչ արժանն
եր , այնուհետեւ հարկի մեծաւորն զիւրն
պատշաճել կամաց նոր ։ Որ ոք չէ անտար
բեր՝ չէ հնար նմա լինել հոգեւոր և ջերմե
ռանդն ։ Որ ոք չէ անտարբեր , յոլովակի
է և հիքնադլուխ ։

❦ ❦ ❦

Գ. Լ. Ժ.

Յաղագս պարկեշտութեան. որ հարկաւոր է կրօնաւորի:

Որդեակ, պարկեշտութիւնն կրօնաւորական է քարոզ լինէ լռիկ, քայլ թափանցանց և աղմուկ. որ ոմն այլոյ անուն ընդ մտանէ՝ ի սիրտ մարդոյ. և խոցեալ զնա՝ առնէ զարմանագործութիւն. և որչափ կարելիքն խոցէ, այնչափ առաւել է պիտանի. և օգտէ ոչ լսողին միայն զայն քարոզ, այլ և առնողին: Այս ըստ պարկեշտութեան պահէ կրօնաւորն՝ ի հոգևորութեան. և այնպէս առ փուխ առադրէ զնա, և զգաստ, մինչև առ ինքն՝ բուրէ անուշահոտութեան եւանգան: Այ՛ կրօնաւորի և զարդ ընտրհաշուք, որ առ մեծաղաց առնէ զնա սիրելի և անձկալի: Ասէ ինձ՝ որ հայիմն՝ ի պարկեշտութեան ներքին, յորմէ ելանէ արտաքինն, այնպէս է հաձոյական, մինչև զհնարքն անել ընդ կենակցութեան նոր: Այս ևս կրօնաւոր պարկեշտ՝ այնոյ մեծարու է յաչս այլոց, մինչև զնա, յոյր աղերս մատչի, ընդունել նմա: Որդ՝ թէ մարդիկ այսչափ ինչ առնեն ընդ կրօնաւոր պարկեշտ, զինչ առնիցեմ ես ընդ նա, որ՝ ի սակս սիրոյ իմոյ պարկեշտութիւն զնայնա. զինչ ոչ ընդունիցի յինէն, որ զեր ի վերոյ սիրելին է ինձ, և հաճելի:

Այլս ևս առնէ զարմանագործութիւն: Ամէն որ յաչխարհի այնպէս ցոփ, և խառնաշաղնաց, որ տեսեալ զկրօնաւոր պարկեշտ՝

ոչ

ոչ զգաստասցի, և առանց լինչ լսելոյ 'ինքը
մանկ՝ ինքնին 'ի պարկեշտութեի յարդարես
ցի։ քանզի ամօթ Թուի նման Թէ առաջի
պարկեշտ կրօնաւորին ոչ և ինքն պարկեշտ
լինիցի։ Եւ ևս պարկեշտուին խոցէ զսիրտ՝
միւս ևս օգտակարագոյն խոցմամբ։ Իբր զի
ձգէ զայլս քաղցրութիւք յեռանդն՝ և 'ի հե
ռևուն վարուց բարեաց։ և ոչ Թողու զնա,
մինչև Հասուցանէ 'ի կատարելումն ներքին
մարդոյ։ յորում է ձշմարիտ խաղաղութի և
Հանգիստ սրտի։ որ քան զամ ըղձալին է յաս
տի կեանս։ որովհետև պարկեշտուին պտ
ղաւորութիւնն է, և լաւ ևս քարոզէ քան զբե
զու։ Ոչ արդարասցի կրօնաւոր, որ ոչ քա
րոզէ այլոց իւրով պարկեշտութիւք։

Ո սորին Հակառակին՝ ցոփութիւնն ևս կրօ
նաւորի՝ խոցէ զսիրտ։ և խոցուածոք
իւր յոյժ են մեսասակար, եթէ այնմ՝ յոր
գտանի։ և եթէ այնմ՝ որ տեսանէ։ Ո՛ե
տես երբեք զկրօնաւոր ոք ցոփ և խառնապղ
նաց, լինել միանգամայն Հոգևոր և եռանդ
նոտ։ Ցոփութիւն միշտ ըստ իւր ունի զյանդգ
նութի, զլրբութի, և զանհնազանդի։ Ո՞րդ՝ զի՞նչ
Հոգի եռանդան լինիցի, ուր կայցեն ախտք
այսպիսի Հակառակք եռանդան։ Ցոփն յայլս
այլոց ոչ միայն չի՛ մեծարուի, այլ և առհաս
ցուն է ծանակ։ և որ ևս է, ընկոյզ առնի
զյարդ իւրոյ կրօնի, և զբարի անուն նր։
զոր առացան այլք առաքինութիւք, և պար
կեշտութիւք։ Եւ ևս ցոփն ոչ միայն վնասէ
այլոց, այլ և Հրապուրէ զնա 'ի խնդհնդուի,

և ևս

ես առաւել զՅակոբն . որք օրհնասոր կա
մարին անձանց զչարն՝ զոր տեսանեն՝ ի կրօ
նաւորս ։ Այլ արդ՝ քեզին դատ արա , որոյ
պատժոյ էցէ արժանի , որ ընտրեալ գոլով
լինել աղ և լոյս Ցի , զի պահեսցէ իւրով
քարի օրհնակաւ զՅիկս , ցոփութիւնք իւրով
ձգիցէ զայլս յանկարգութիւնս և ՚ի դժպա
տեհութիւնս ։ Կրօնաւորք ցոփ՝ ատելի է ամ
իմաստնոց և Հոգեսիրաց . որք այնպէս խո
ցին ՚ի սիրտ , մինչև առ ամենեցուն շառաչու
նել նոք ։ Արդ՝ զիարդ հաճոյասցի ինձ , ծա
ռայ գոլով իմ , քնակեալ ՚ի տան իմում ։
Պարծանք են իշխանաւորի՝ թէ ընտանիք
իւր էցեն պարկեշտ , և ամենեսեան . ոչ և
նախատինք են նմ , եթէ էցեն ցոփ , և աղ
ձաո ։ Այսպէս պարկեշտուն կրօնաւորաց ,
որ են իմ ընտանիք , լինին ինձ ՚ի պարծանս ,
և ՚ի պատիւ . ոչ և ցոփութիւն նոց , լինին ինձ
՚ի նախատինս ։

Տէր , լուաք ՚ի բազմից ասել , թէ շատ է
քեզ՝ զի նեղբինն մարդոյ էցէ քարի . և
հաճոյ է քեզ սիրտ նոր , միայն թէ էցէ ու
ղիղ ։ Ով այդպէս է . ապա մի անհաճոյ
թուիեսցի քեզ , եթէ կրօնաւոր ոք չիցէ ըս
արտաքնոյն բարեկիր և պարկեշտ , միայն
թէ սիրտ և նեղբինն նոր էցեն ուղիղ և բա
րեկարգ ։ Արդեաք , եթէ կարծես , թէ
այնպէս բերկրիմ ես ըս սիրտ բարի , որ այլ
զարտաքինն պարկեշտութիւնն նոր չէ լինչ ինձ
փոյթ , խաբիս . վ՛ն զի զերկաքանչիւրն
ինդրեմ . թէպէտ կրօնաւորն՝ որոյ ուղիղ

է սիրտ, Հաստատակ օրինօք այնպիսին և յայտ տաքինս է պարկեշտ։ ոմն և որոյ անկարգ է սիրտ, ղեղմ են նմ և արտաքինք։ Այլ և ս կրօնաւորն պարտապան է շինել զընկերս։ վնյ Թէպետ և ուղիղ և բարի իցէ նր սիրտ, սակայն ոչ կարօղանայ շինել զընկերս, որք ոչ տեսանեն զնեղըքինն։ ապա Հարկ է նմս Հաձել, և շինել զնս արտաքինն պարկեշտու Թիք յորմէ խմաստասիրեն նոքա զնեղըքինն։ Այդ Թէ արտաքինն կրօնաւորին էցէ ան կարգ, Համարիցին և զնեղըքինն նր նոյն պէս։ և այնպէս փոխանակ շինուէ առցեն դայԹակղուԹիւն։

Ման կրօնաւորք, որք քաջ Ջանան երևիլ միշտ պարկեշտք, և բարեկիրք։ այլ ան Հոգի են յարդարել և կարգել զնդձն և զա խորժակս սրտի։ Ոչ այս պարկեշտուԹ, զոր խնդրեմ ես 'ի կրօնաւորն։ մ զն Թէ կամի նա երևիլ խոնարհ և պարկեշտ, զն գովեսցի յայլոց։ այդ լինի պարկեշտուԹ փարիսեցա կան, որ վաՃառի մարդկան գիւրագին։ և ոչ լինի նմ Հատուցումն յերկինս, մ զն ընելոյ գնոց նր անարգ և երկրաւոր։ Այսպէս Թէ կամի երևիլ պարկեշտ 'ի շինուԹիւն ընկերաց, կամ 'ի չգայԹակղեցուցանել զնս, այս է պարկեշտուԹիւն Ջանահնար, բռնանկան, և ծախաւտուն։ ՊարկեշտուԹիւն ինձ Հաձոյական՝ է բարեկարգուԹիւն արտաքին և վայելչուԹիւն վարուց, որ յառաջագոյ 'ի նեղըքին բարեկարգուԹէ, որով ամ կիրք են Հալատակ բանին։ Այս պարկեշտուԹ տայ

կրօնաւորի մեծարոյութեի յարդական. սա է պատշաճող կրօնաւորական վիճակի, որ առնէ զնա շնորհաշուք և արդոյ յաչս աշխարհականաց. սա ընկերէ կրօնաւորի ըզտիւր և զպիշերը, եթէ կայ յեկեղեցւոջ, և եթէ դադարէ 'ի խոսի։ Եթէ ուտէ կրօնաւորն, եթէ ըմպէ, եթէ խօսի, և եթէ զբնայ, միշտ պարկեշտուհին առ նմի կայ։

Ա՛րդեակ, կամիս միջոց դիւրին բայց զօրաւոր՝ առ ստանալ զպարկեշտուհի, զնա գնալ առաջի իմ. այս է, յամառս քո, եթէ գաղտնի իցեն՝ և եթէ յայտնի, եթէ 'ի տունջեան և եթէ 'ի դիշերի, եթէ առանձինն, և եթէ ընկերի. խորհեաց, զի կաս առաջի իմ, և ես զամն տեսանեմ, ոչ և է խոկ։ Օ այս արարեալ պատկառեցիս յերեսաց իմոց՝ սակ կամ առնել ինչ անվայելուչ և անարժան քումմ վիճակի։

Գ Լ. Ժ Ա.։

Յաղագս առաքինութեանց աղօնից։

Ա՛րդեակ, ձշմարիտ է առացեալն ոմանց. Թէ ազօթքն է ինձ զոհ. և սընայի հարուճածք, և հոգւոյ մատուցողին զօրավիգն և քաջալեր։ Ա՛րդ զոհն՝ ոչ զի լիցի 'ի հատանուշից՝ պիտոյ է նմի լինել ըստ կամաց ընդունողին, և ոչ թէ մատուցողին։ Ա՛ռ ակ յոր դոր քո յաղօթս՝ լինելոց է սերտ յօժարուի հաձոյ լինելոց նոր ինձ և ոչ այլոց, և ոչ անձին իսկ. և սիրելեայ լինիս հաձոյասցի, եթէ

թէ արասցես աղօթս ըստ կամս իմ. թէպէտ
և ոչ կայցէ քո անդ միխիթարուն ։ Օ ոհգ
առաքինիք մեռանիլն ըստ պատուիրելոյ Քրիս
ղիկոս. և մեռուցիչք նոցա այլ ինչ ընդրեին
ի պաշտօնակից, քայց զի զոհք իւրեանց մա
տուցին ըստ նմ կամացն ։ Հակառակ է այսմ
սատանայ. որ պէսպէս միջոցօք հնարի խա
փանել զայս հաճոյական զոհ աղօթից.
մերթ երևեցուցել զնա քեզ կարի ինն դժ
ուարին, զի զանց զնուազ արասցես. մերթ
հատանեցուցեալ, թէ չէ դէպ ժամանակ,
զի յապաղեացես. մերթ առաջի արարեալ
ոմն ինասակար ինն առողջութե, զի արհա
մարհեացես ։ Այլ չէն ինչ զարմանք, զի ա
ղօթք հարուճածք են նմա. վասն սատանայ
մեծապէս երկնչի ի նմանէ ։ Այլ որչափ
առելի է նմա, այնչափ սիրելի լուցի կրօնա
ւորի. զի աղօթքն կերակուր է կազդուրիչ
հոգւոյ նր ։

Առաքինութիւն աղօթից այսպէս հաճոյ է
Տեառ իմում երկնաւորի, որ մինչանելս յերկ
նից՝ պատուիրէր ետ ինձ ուսուցանել իմոց ա
շակերտաց զձև աղօթից. յոր կամ ցաւ
կոչիլ Հայր, զի ամենեքեան հաւասարձակ ղի
մեացեն առ նա ի կարիս իւրեանց. և միան
գամայն ածուածն լուցին փառաբանիչք ի
նք կրթուին աղօթից. որ այնպէս քաղցր
է նմա, մինչև յապաղէ երբեմն տալ զպարգևս
հայցեալս ինձ. զի յերկարեացեն յաղօթս ։
Այլև ինձ հաճոյ և ընտանի եղեն աղօթք.
վասն յաւետարանի գոլեցի զնա՝ և աւան

դեցի , ոչ բանիւ միայն , այլ և օրինակաւ և գործով ։ Լաւ յորժամ ի տուէ , վա՛ միա դնելոյ քարոզութե՛ , և վա՛ խօսելոյ ընդ ժո՛ղովրդեան զիրկութե՛ նոյ՝ ոչ ժամանեմ ա՛ռանձնանալ յաղօթս , ի գիշերի աղօթս առնեմ ։ Ա՛վ , ոմն ի չարիս կայ , և սաստիկ համար ունի տալ կրօնաւորն ։ որ զժամա նակն տուեալ նմա՝ ի կրօնե վա՛ աղօթից , կի՛մ ոչ ծախէ զոլորովին ի՛նձ յայնմ կրթուի ։ կի՛մ ոչ ծախէ ոմն արժանն եր , և հնար եր նմա ։ Ա՛ ամօթ նախատանաց է , ի լինել նշանի առ այլ գործս որ ի մարմնոյ պէտս՝ ժիրաժիր և խնդաւիտ գնալ ։ և ի լինել նը շանի առ աղօթս՝ հիւանդաբայլ և խոր ա կամայ բերիլ ։ Ահ դու զաղօթագ Թողուս , կի՛ չարաչար կատարես , ոչ տեսանես , զի զրկես և զայլ կրօնս՝ որ բաժանորդն են գոր ծոց կրօնի քո ։ Ա՛յլ որ ոչն խղձէ զրկել զոգ հոգի իւր յօգտէ աղօթից , ոչ խղձէ՝ զրկել և զայլս ։ Ո՛տառայ՝ որ ոչ սիրէ զՀաձոյն տէն իւրոյ՝ ոչ սիրեսցի ի՛նմանէ իւրմէ ։

Աղօթք ոչ այլ ինչ են , բայց զրոյց և տուր եաս բանաւոր ստեղծուածոց ընդ իւ րում ստեղծողն ։ որում առաջի առնէ Հա մարձակ զիւր և զայլոց կարիս , զի ոմն Հայր գորովական՝ ի Թիկունս Հասանիցէ իւրոց որդեկաց ։ Ոյժ Հաձոյ են ինձ , որք յա ղերս մատուցեալ առ Հայրն երկնաւոր ա ղօթիւք , կարդան և զսքա ընկերել նոյ՝ ի նոյն ։ Ահաձակ եմ և ընդ՝ որք յառաջ քան զկիսգն աղօթից ; խնդրեն յինէն ընդորհս

առ

առ բարւոք կատարումն . ասպա խնդրեն նե
րումն անկատարութեից իւրեանց և մեղաց .
որք խաւիանեն զպտուղ և զբարւոք եղս ա
ղօթից ։ Յաճեն զիս և նոք , որք առ բար
ւոք աղօթս առնել , ոչ միայն ի բաց թօ
թափեն զամ հոգս այլոց իւրաղութեից , որք
ցնդեն զմիտս յայս գործ բարեպաշտութե .
այլ և ջանան կալ վայելչադիր մարմնով , ի
նպաստ մտադիր և ջերմեռանդն աղօթից ։
Այս ով զի աղօթքն ե պատարագ , որ մատ
չի ոչ , առ բարւոք միտուցանել ոչ ե պարտ
զանցառնել զիւիք ։

Ամանք ոչ ընդունին զոր խնդրեն յա
ղօթս իւրեանց . զի ոչ խնդրեն զպատ
շաձն , եւոյ արժանն ե ։ Որ խնդրե զան
պիտանս և զմնասակարս հոգւոյ , ոչ խնդրե
զոր պատշաձն ե խնդրել ։ Յաղօթս պարտ
ե խնդրել զբարիս , և զիրկուքին պիտա
նիս ։ Ո անատարքեր իրս , զորս մաքթ ե ի
կիրարկանել բարիոք կիճ բարեաք , որպիսի են
պատիճ , ինչք , և առողջուի , պարտ ե խնդ
րել պայմանաւ . եթե օգուտ իցեն հոգւոյ ։
Ա առ և այս դիտե քժիշկն , քան զհիւանդն , որ
առաւել օգտակար իցե առողջուե նր . վասն
ոչ միշտ տայ զհիւանդին խնդրեալն , զի տա
ցե նմա զօգտակարն ։ Յիմմէ առաքելոյ ոչ
ի բաց արարի զիսայթ մարմնոյ , թէպետ և
բազում անդամ խնդրեաց զայն յաղօթս .
զի առաւել օգուտ երևիմ ունել զայն խայթ ։
Պիտանապէն ե կրօնաւորի լի լինել առ
դեամբք , քան կատարիլ կամաց նր ։ Որ

յաղօթս ոչ խոնարհի , յիշելով զիւր կա-
րիս , ոչ ընդունի գՀայցուՀածոն , զի ոչ Հայ
ցէ քարիսք։ Որ ոչ աղօթէ Հաստատուն Հա
ւատով , թէ կարող եմ տալ , որչափ ինչ
խնդրէ յԻնէն , ոչ ընդունի գընծորհն . զի ոչ
խնդրէ զայն ըստ արժանեացդ ։ Որ ոչ յարու-
ցանէ յաղօթս և ՚ի ՀայցուՀածս զոր առնէ ,
կամ Հոգւոյն խնդրէ , ոչ ընդունի . զի ոչ
բարւոք Հայցէ ։

Ալան և այլք , որք իբրև ոչ ընդունին վաղ
վաղակի գընծորհն զոր խնդրեն , կասին
յաղօթից . և նոյ է պնաան . զի իմ Հաստա
տեալ է ՚ի միտս առնել նոյ ընծորհս՝ աւելի քէ
զոր խնդրենն . բայց զի չտպասեն վայր մի ,
զնոսին կորուսանիցէ ՚ի յաղագս որոյ նոյ
նոյ գընծորհս , և ՚ի յարատեւել նոյ յաղօթս ,
առաւելու ՚ինձ անձուկ ստանալոյ զայն . և
իբրև ստանան , ճանաչեն գյարդ նոր , և լաւ
ևս պահեն ։ Այս ևս Հանապազորդեն յա-
ղօթս՝ որ է գործ բարի և արդիւնաւոր . և
լինին ընդունակագոյն առ ընդունել զընծորհս , որոց ըզձանան ։ Որ զի կացեալ ՚ի
մէջ երկիւղի և յուսոյ ընդունելոյ զոր Հայ
ցենն՝ խորհին յանձինս , մի իցէ թէ կայցէ ՚ի
մեզ մեղք ինչ կամ անկատարութիւն՝ որ զայն
խափանէ . և իբրև գտանեն ինչ պակասու
թիւն՝ ապաշաւեն , և այնպէս լինին մաքրա-
գոյն և ընդունակագոյն առ ընդունել զընծորհն , որում անձկան ։ Ոմն այսոքիկ ոչ
իցեն ազգի ազգի ընծորհք , զոր առնեմ , ոչ
վաղ ընծորհելով զինդրեացն ։ և զիարդ կա-
սին

սին յաղօթից։ Ասացուա՛ր ինչ չնորհի վ՚ս ժը
առնէ՛, որ ո՛չ արդեօք չնորհիւր, թէ ո՛չ
ժառնին։ Ոչ (ըստ ասելոյ իմաստնոյն), լաւ
է կատարած աղօթից քան զսկիզբն. զի
գործն ո՛չ առնու կատարումն ի սկիզբն՝ այլ
ի կատարածն։ Պատրաստականին դիտե՛
ցած տալ՝ աւելի քան զոր դիտէ նա խնդրել։
Ոյլք գտեալ զանձինս յաղօթս՝ ցամաքս
և ո՛չ եռանդնաստ, զանց առնեն զնո-
վաս։ Ոչ բարւոք է հնարդ։ Եթէ ցաման-
քութեդ ջնաս ի քէն է, զի՞ գնաս յաղօթս
անպատրաստ, և դլխովին ցնդեալ ի խոր-
հուրդս օտարոտիս։ Ոպա թէ ո՛չ ի քէն է
ջնասն, զիա՞րդ կասկիս յաղօթից. ո՞չ
լաւ և այ՛ն զպատճառն բառնալ զցամաքու-
թե՛ն և զցնդմանն։ Որ անզգաստութե՛ն դնէ,
ո՛չ հատանել զոտն, զի ո՛չ իւր է մէջն. և ո՛չ
կասի՛ ի գնացից. այլ առաւել ևս զգաստա
ծայ, զի մի՛ միւսանգամ դնեսցէ։ Ոյս չի՛
արժան քեզ կասիլ յաղօթից, թէպէտ և
անպարտ գտցիս ի՛նքդ ցամաք. իբր զի եր-
բեմն առ քո օգուտ հատանեմ ի՛ քէն ըզ-
չնորհ միխիթարութե՛ն. զի ծանուցեալ, թէ
անձամբ չէս բաւական ունել քաղցրութի՛ն
և եռանդն յաղօթս, խոնարհեացիս առա-
ջի իմ, ի միտ առեալ, թէ պարգեւ է, զոր
առնեմ, ո՛ւմ կամիմ, և երբ կամիմ։ Ոյս
ևս սակ ինձ, զիա՞րդ առնես դու աղօթս.
եթէ յայն սակս՝ զի անձին հաճոյ լինիս,
մի՛ ևս պլուսմ հատուցմանն և թոշակի յի-
նէն ակնկալեիս. որովհետև քաղցրութի՛ն

զոր Հաշակես ՚ինամ , ընդունիս լուռ զվը-
Հարս ՚յոկ Թէ առնես աղօթս , զի ինձ Հա
Ձոյ լիցիս , շատ է քեզ , Թէ ինձ քաղցրաս
ցի ։ Պարտ է կոչնատեսուն լինել Հարսնա
միտ , յորժամ կոչնականին քաղցրանան
խորտիկք ։ Թէպետ և անձին չիցեն ախոր-
ժաձաշակ ։

Ան և այլք , որք զանց առնեն զաղօ-
Թիւք ։ զի բաղխին յայնմ պեսպես նե-
ղացուցիչ խորհրդովք և խղձիւ ։ Ո՛չ քաջ
զօրականն , որ ՚ի հնչել փողոյ , կամ յերևիլ
Թշնամեաց՝ գարձուցանէ զԹիկունս ։ Ո՛չ ինչ
Ինաս գործեն քեզ տարադէպ խորհուրդք ,
Եթէ դան ընդդէմ կամաց քոց ։ և դու չես
Ինչ նոցա Հաւան ։ Ո՛չ առ է ինձ , զի երբև յան
ձին զչաս զնիս , ՚ի քոյ արասցես ։ և Թէ
գառնան , գարձիր և դու մերժել զնոս ։ և
Թէ բովանդակ յաղօթս ոչ այլ ինչ արաս-
ցես , քայց վանել ՚ի քէն զտարադէպ խոր-
Հուրդս ։ այնպէս Հաճոյ լիցի ինձ , ոչ Թէ
աղօԹիդիր մնադիր ։ և արդիւնս ստացիս
առնուլ՝ քան Եթէ քաղցրանայիր և մխի-
Թարիդիր յաղօթս ։ Ո՛չնիւ ծառայ մեծ Հա
մարի զինն սիրելոյ Թագաւորին քան զիւրն ։ զի
զինն իւր Համարի ։ Ա՛ն խղճահարութիւնք
քաջ Հնար է , չՀամարել զնա ինչ ։ այլ
միտ դնել աղօԹիցդ ՚ի փառաբանուն ածա
լին բարութեն ։ Այլ զխղճահարութիւն Հա
մարի ինչ , վասիպ ՚ի պղտոյ բազում գոր-
ծոց բարութե ։

Այլք վն զի ոչ տեսանեն զպատուղ աղո-
Թից ։

Թէ՛ , ոչ մեծ ինչ զայն վարկանիմ . և յո-
լովակի Թողուն զնա՝ ոչ անպիտան ինչ կըր-
ԹուԹէ : Արդեակ , ոչ բարւոք է հեռևու
Թէդ . ոչ օգտիմ ես յաղօԹիդ , ապա լաւ
է ինձ Թողուլ զնա : ԵԹէ ոչ օգտիս , ոչ յա-
ղօԹիդ՝ այլ՝ ի քէն է փրկանն . զի Թէ կամիլիր ,
կարող էիր օգտիլ՝ ի՛ր լինելոյ աղօԹիցն շա-
հաւոր յոյժ : Եւ լուցանէ զկրակ , և կայ՛ ի
բացէ , ոչ լինդուանի ջերմուԹի՛ ինմանէ . և-
Թէ զաղօԹող զոր առնես՝ ոչ մօտես՝ ի քեզ ,
ոչ ջեռուցանէ զքեզ : Եվ , քանզի ուրախ
առնէ զիս կրօնաւորն , որ յետ իմոյ փառա-
բանուԹեան յաղօԹս , կանանէ նոքօք զվարս
իւր , խորհեցեալ յախտից , և բուռն հա-
րեալ զառաքինուԹէ , զոր խոհեցաւն յա-
ղօԹս : Այլ Թէև ոչ օգտեսցիս յանձն քո ,
ոչ վն այդր պարտ է քեզ Թողուլ զաղօԹս .
զի կայ նոր և այլ օգուտ , որ ոչ պակասի եր
քեզ . յո՛ է , պատուհել զիս . և զիմ քիմն ա-
մոքել զքոյոյ արարչի : Եպեպետ բարւոյ
կրօնաւորն պարտ է ոչ զտեղի առնուլ յայս
վայր . , այլ յառաջել՝ ի գործ . զրուկ առա-
ւել ևս պատուհէ զիս . և զիմ քիմն ևւս ա-
մոքե : Ոյ չէմ հաճեալ ըստ այնպիսին , որ
յաղօԹս ինդրէ ինչ առաքինուԹէ , և ոչ
ժրանայ՝ ի ստանալ զնա՝ գործովք ինչ նո-
քանզի այս է փորձել զնա : Ո՞վ արժան քեզ
պահանջել բովանդակ լինելն , զոր կարող ես
ստանալ լսելով օդնուԹէ :

Տ՛ր , օրինօք քո պատուիրեն մեզ յամ ժամ
կալ յաղօԹս : Այս զնորոդ հնարիցէ այդմ
լինել .

լինել. Հարկ՝ ի վէր կայ ուսել, ննջել, զա-
բարուք պատահիլ, յոր գործս չէ հնար կալ
յաղօթս։ Այլ եւ. մի իմանար զայդ՝ ոչ
թէ հարկ եցե երթալ անդադար կալ յաղօթս.
այլ՝ ի միտ առ, զի այն կրօնաւոր ասի յամ
ժամ կալ յաղօթս, որ ոչ զանց առնէ երթիլ
աղօթել՝ ի սահմանաւոր ժամն և՝ ի ժամս
հնակս։ Այլ նա եւս ասի յամ ժամ կալ յաղօթս.
որ զոր ինչ առնէ, առնէ՝ ի փառս իմ։ Այլ եւս
